ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում խոզաբուծության զարգացման նպատակով ձեռքբերվելիք խոզամերուների և կերի արժեքի փոխառությամբ տրամադրման կարգի մասին

1. Փոխառությունը տրամադրվում է տարեկան 6 տոկոսով՝ առանց գրավի առարկայի, առավելագույնը հինգ տարի ժամկետով:

2. Հայտատուները մինչև սույն թվականի հոկտեմբերի 30-ը ներառյալ ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն են ներկայացնում հայտ՝ համաձայն ձևի, գործարար-ծրագրեր՝ նշելով խոզաբուծությամբ զբաղվելու հնարավորությունների, պայմանների ու խոզամերուների և կերի պահանջարկի մասին տեղեկություններ:

3. Նախարարությունը հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո տասնօրյա ժամկետում ստուգում է ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը, ընդհանրացնում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ (այսուհետ՝ հիմնադրամ) է ներկայացնում դրական եզրակացություն ստացած հայտատուների ցանկն ու նրանց գործարար-ծրագրերը:

4. Փոխառություն տրամադրվում է միայն այն հայտատուներին, որոնք կապահովեն հետևյալ պահանջները՝

1) անասնաշենքի մեկուսացում ցանկապատով, պատով և այլ պաշտպանիչ շերտով.

2) սանիտարահիգիենիկ և հակամաճարակային միջոցառումների իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծում, մասնավորապես՝

ա. պետական պլանային հակահամաճարակային միջոցառումների խստիվ իրականացում,

բ. ախտահանիչ պատնեշի պատրաստում,

գ. մշտական ջրով ապահովում,

դ. պատուհանների ցանցապատում.

3) կերակրման, խնամքի և պահվածքի հատուկ պայմանների ապահովում, մասնավորապես՝

ա. խոհանոցային մնացորդներով կերակրելուց խուսափում,

բ. փակ պահվածքի ապահովում,

գ. ջերմային, լուսային և օդափոխանակության ռեժիմների պահպանում:

5. Հիմնադրամը՝ նախարարության կողմից ներկայացված եզրակացությունների հիման վրա ապահովում է գույքի փոխառությամբ տրամադրման գործընթացի իրականացումը:

6. Հիմնադրամը գործընթացն ավարտելուց հետո, նախարարություն տեղեկություններ է ներկայացնում գործընթացի իրականացման արդյունքների մասին:

7. Նախարարության կողմից պարբերաբար ուսումնասիրությունների արդյունքում ի հայտ եկած՝ փոխառության գումարը վաղաժամկետ մարած, փոխառության պարտավորությունները բարեխիղճ իրականացնող և բարձր արտադրողականություն ապահովող հայտատուները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից կարժանանան դրամաշնորհի:

ՀԱՅՏ

Դիմող _____
(ֆիզիկական կամ իրավաբանական անձ)
_____
Բնակության վայրը (գտնվելու վայրը),
հեռախոսահամարը _____
Անձնագրի և սոցիալական քարտի համարը _____
Գործունեության իրականացման վայրը _____
Հայտին կից ներկայացվում են՝
1._____
2._____
3._____
4._____
5._____
6._____

_____ _____
(անուն,ազգանուն) (ստորագրությունը)

«____» _____ 20___ թ.